ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 69-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1. Նոր Հաճըն համայնքապետարանի ձեռքբերած գույքը սեփականության իրավունքով օգտագործման տրամադրել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն 1-3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված 1
Նոր Հաճընի համայնքի
ավագանու 2025 թ. հունիսի 27-ի թիվ 69-Ա որոշման

Ցանկ

<< Նոր Հաճընի համայնքապետարանի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց հանձնվող գույքի

Ապրանքի					
Հ/Հ	Անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
1	Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար	հատ	78000	78000	1
2	Բժշկական թախտ	հատ	32000	32000	1
3	Գրապահարան	հատ	31580	189480	6
4	Գրասեղան	հատ	19200	38400	2
5	Գրասեղան /խորհրդակցությունների/	հատ	39588	39588	1
6	Դարակաշարեր/ մթերքը տեղավորելու համար/	հատ	147257.14	294514.28	2
7	Զգեստապահարան աշխատակիցների համար	հատ	30560	122240	4
8	Ղեկավարի աթոռ	հատ	48000	48000	1
9	Ղեկավարի սեղան՝ դիմադիրով	հատ	82665.6	82665.6	1
10	Սպասք լվանալու մեքենա	հատ	183000	732000	4
	Ընդամենը			1656887.88	23

Համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյան

Հավելված 2
Նոր Հաճըն համայնքի
ավագանու 2025 թ. հունիսի 27-ի թիվ 69-Ա որոշման

Ցանկ

Նոր Հաճըն համայնքի <<Քանաքեռավանի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց հանձնվող գույքի

Ապրանքի					
Հ/Հ	Անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
1	Ապակե պահարան՝ առաջին օգնության անհրաժեշտ դեղորայքի համար	հատ	78000	78000	1
2	Արդուկ	հատ	16800	16800	1
3	Արդուկի սեղան	հատ	22200	22200	1
4	Բժշկական թախտ	հատ	32000	32000	1
5	Դարակաշարեր/ մթերքը տեղավորելու համար/	հատ	147257.14	294514.28	2
6	Զգեստապահարան աշխատակիցների համար	հատ	30560	30560	1
8	Լվացքի մեքենա	հատ	229200	229200	1
9	Լվացքի չորանոց - մեքենա	հատ	183732	183732	1
10	Կոշիկների դարակաշար	հատ	36000	108000	3
11	Մանկական զգեստապահարան	հատ	40680	244080	6
12	Մանկական սպիտակեղենի հավաքածու	հատ	3333	300000	90
13	Մանկական սրբիչ	հատ	792.67	142680	180
14	Մարմնամարզական նստարաններ	հատ	39960	119880	3
15	Պահարան՝ տնտեսական պարագաների համար	հատ	25050	150300	6
17	Սննդի մշակման մետաղյա սեղան	հատ	93000	186000	2
18	Սննդի մշակման սեղան	հատ	60000	120000	2
19	Սպիտակեղենի պահարան-յուրաքանչյուր խմբի համար	հատ	45532	136596	3
20	Փոքրիկ սառնարան դեղորայքի համար	հատ	108000	108000	1
21	Զոդուսկիչ	հատ	246000	246000	1
	Ընդամենը			**2748542.28**	**306**

Համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյան

Հավելված 3
Նոր Հաճըն համայնքի
ավագանու 2025 թ. հունիսի 27-ի թիվ 69-Ա որոշման

Ցանկ

Նոր Հաճըն համայնքի <<Նոր Գեղիի թիվ 1 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց հանձնվող գույքի

Ապրանքի					
հ/հ	Անվանումը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը
1	Աթոռ աշխատանքային	հատ	8400	336000	40
2	Աթոռ աշխատանքային	հատ	7960	238800	30
3	Աթոռ համակարգչի	հատ	22000	44000	2
4	Աշխատանքային կենտրոն /պահարաններ զարգացնող միջավայրի համար/	հատ	66492	132984	2
5	Բժշկական թախտ	հատ	32000	32000	1
7	Գրապահարան	հատ	32580	189480	6
8	Գրասեղան	հատ	19200	192000	10
9	Դարակաշարեր/ մթերքը տեղավորելու համար/	հատ	147257.14	441771	3
10	Երկհարկանի մահճակալ՝ ներքնակներով	հատ	46200	1663200	36
11	Զգեստապահարան աշխատակիցների համար	հատ	30560	305600	10
12	Էլեկտրական սալօջախ եռաֆազ	հատ	618000	618000	1
13	Համակարգիչ	հատ	226080	226080	1
14	Պահարան՝ սպասքի համար	հատ	40762.8	163051.2	4
15	Ղեկավարի աթոռ	հատ	48000	48000	1
16	Մահճակալ՝ ներքնակով	հատ	46000	414000	9
	Մահճակալ՝ ներքնակով	հատ	46800	46800	1
17	Մանկական աթոռ /3-4 տարիքային խմբի համար/	հատ	5640	169200	30
18	Մանկական աթոռ /5-6 տարիքային խմբի համար/	հատ	5680	340800	60
19	Մանկական աթոռ/4-5 տարիքային խմբի համար/	հատ	5640	169200	30
20	Մանկական զգեստապահարան	հատ	40680	569520	14
21	Մանկական սեղան՝ չորստեղանի /4-5 տարիքային խմբի համար/	հատ	19080	190800	10
22	Հացի պահպանման պահարան	հատ	57840	57840	1
23	Պահարան՝ տնտեսական պարագաների համար	հատ	25050	50100	2
24	Պատրաստի սննդի բաշխման սեղան /ակերով/	հատ	40800	204000	5
25	Սառնարանային տեխնոլոգիան	հատ	249240	249240	1
26	Սննդի մշակման վերադիր սեղան	հատ	93000	186000	2
27	Սպասքի պահարան/աշխատանքային	հատ	15480	30960	2
	Ընդամենը			7309426.2	314

Համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 68- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 882 որոշման պահանջներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Նոր Հաճընի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի (այսուհետ՝ լրիվ մաշված գույք) դուրսգրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕՋՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հաստատված
ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի
ավագանու 2025թ. հունիսի 68 Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի (այսուհետ՝ լրիվ մաշված գույք) դուրսգրման կարգը:

2. Սույն կարգի իմաստով գույքը լրիվ մաշված է համարվում, եթե.

1) այն հետագա շահագործման համար ոչ պիտանի է դարձել լրիվ ֆիզիկական մաշվածության, վթարների, տարերային աղետների, շահագործման նորմալ պայմանների խախտման հետևանքով և այլ նմանատիպ պատճառներով,

2) այն պիտանի չէ հիմնարկի, կազմակերպության ընդլայնման, վերակառուցման և տեխնիկական վերազինման նպատակով օգտագործելու համար,

3) դրա հետագա օգտագործումը, իրացումը կամ օտարումը անհնար է կամ տնտեսապես աննպատակահարմար:

3. Սույն կարգի 2-րդ կետի համաձայն լրիվ մաշված գույքը լուծարման ենթակա է, եթե այն.

1) իր մեջ պարունակում է այնպիսի նյութեր, դետալներ, առանձին մասեր, որոնք անհրաժեշտ են կազմակերպությանը հետագա գործունեության համար,

2) պարունակում է գունավոր և թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր:

4. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված լրիվ մաշված գույքի լուծարումից առաջացած թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հանձնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5. Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ձևակերպելու նպատակով համայնքի ղեկավարի կարգադրությամբ, իսկ կազմակերպության դեպքում՝ կազմակերպության ղեկավարի հրամանով, ստեղծվում է հանձնաժողով, ընդ որում.

1) հիմնարկի լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման համար ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ լրիվ մաշված գույքի համար պատասխանատվություն կրող անձինք, համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչները, ինչպես նաև անկախ գնահատողը /տնտեսապես շահավետ լինելու դեպքում/ կամ, անհրաժեշտության դեպքում՝ անկախ գնահատող խումբը,
2) կազմակերպությունների լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման դեպքում հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նաև կազմակերպության համակարգումը իրականացնող ստորաբաժանման մեկ մասնագետ, իսկ տրանսպորտային միջոցների դեպքում՝ նաև Նոր Հաճընի **համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետը:**
6. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար, անհրաժեշտության դեպքում, կազմակերպության ղեկավարը, պայմանագրային հիմունքներով, կարող է ընդգրկել համապատասխան մասնագետների:
7. Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման համար ստեղծվող հանձնաժողովը.
1) անցկացնում է լուծարման կամ դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքի զննում և օգտագործելով անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման տվյալները, կազմում եզրակացություն՝ հիմնավորելով նրա հետագա գործածության համար ոչ պիտանելիությունը կամ հետագա վերականգնման աննպատակահարմարությունը՝ նշելով լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման հիմքերը (մաշվածություն, վերակառուցում, շահագործման նորմալ պայմանների խախտում, վթար և այլն),
2) հիմնավորում է լուծարման կամ դուրսգրման ենթակա լրիվ մաշված գույքի օգտակար ծառայության սպառված լինելու փաստը,
3) միջոցներ է ձեռնարկում լրիվ մաշված գույքի ժամկետից շուտ շահագործումից դուրս գալու համար մեղավոր անձանց հայտնաբերման ուղղությամբ, ներկայացնում առաջարկություններ հիմնարկի, կազմակերպության ղեկավարությանը՝ մեղավոր անձանց, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,
4) որոշում է լուծարված լրիվ մաշված գույքի առանձին հանգույցների, դետալների, նյութերի հետագա օգտագործման հնարավորությունը և կատարում դրանց գնահատումը,
5) իրականացնում է հիմնարկի, կազմակերպության ղեկավարի կողմից ստեղծվող աշխատանքային խմբի վերահսկողությունը լուծարման ենթակա լրիվ մաշված գույքից պիտանի հանգույցները, դետալները, գունավոր և թանկարժեք մետաղներն առանձնացնելու նկատմամբ, որոշում է դրանց քանակը, կշիռը և վերահսկում դրանց հետագա պահեստավորումը,
6) կազմում է լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման ակտ՝ համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի կողմից 2000 թվականի հունիսի 12-ի «Հիմնական միջոցների և տեղակայման ենթակա սարքավորումների սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների օրինակելի ձևերը և դրանց

լրացման ցուցումները հաստատելու մասին» N 104-Ա հրամանով հաստատված «Հիմնական միջոցների դուրսգրման ակտ» ՀՄ-8 ձևի:

8. Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման ակտում նշվում են նաև լրիվ մաշված գույքը բնութագրող հետևյալ տարրերը.

1) գույքի արտադրման կամ կառուցման ամսաթիվը,

2) հիմնարկի և կազմակերպության կողմից գույքի ձեռքբերման ամսաթիվը, այն շահագործման հանձնելու ամսաթիվը,

3) գույքի սկզբնական արժեքը (վերականգնված արժեքը, վերագնահատման ամսաթիվը, արժեքը),

4) հաշվապահական հաշվառման նպատակով հաշվարկված մաշվածության գումարը (վերականգնված արժեքը, վերագնահատման ամսաթիվը, արժեքը),

5) գույքի լուծարման կամ դուրսգրման հիմքերը (մաշվածություն, վերակառուցում, շահագործման նորմալ պայմանների խախտում, վթար և այլն),

6) գույքի հիմնական մասերի, դետալների, հանգույցների, կառուցվածքային տարրերի վիճակը:

9. Ավտոտրանսպորտային միջոցների լուծարման կամ դուրսգրման ժամանակ հանձնաժողովը իր եզրակացությունը, համապատասխան հիմնավորումներով, /խոտանման ակտ, խոտանման ընդհանրացված հայտը և տեխնիկական անձնագրերը/ գրավոր ներկայացնում է Նոր Հաճընի համայնքապետարան: Բացի սույն կետում նշված տարրերից, նշվում է նաև ավտոմեքենայի վազքը, անհրաժեշտության դեպքում՝ տեխնիկական այլ տվյալներ:

10. Վթարի կամ այլ պատահարի հետևանքով հիմնարկի, կազմակերպության հաշվեկշռից լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման դեպքում ակտին կցվում է վթարի կամ այլ պատահարի մասին կազմված արձանագրության օրինակը, վնասի փոխհատուցման կամ վերականգնման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը:

11.. Լրիվ մաշված գույքի լուծարման կամ դուրսգրման մասին հանձնաժողովի ակտը ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից և հաստատվում հիմնարկի, կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով:

12. Հիմնարկը, կազմակերպությունը իր հաշվապահական հաշվեկշռից լրիվ մաշված գույքը կարող է դուրս գրել միայն ամորտիզացիայի ժամկետը լրանալու դեպքում: Մնացած դեպքերում դրանք դուրս են գրվում Նոր Հաճընի համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ՝ թույլտվության առկայության դեպքում: Համայնքի ղեկավարի համապատասխան որոշմամբ թույլտվության առկայությունը պարտադիր է նաև, եթե կազմակերպության սեփականություն հանդիսացող գույքի լուծարումից կամ դուրսգրումից ստացված և հետագա օգտագործման համար պիտանի առանձին հանգույցների, նյութերի, դետալների, մասերի, որոնք պարունակում են գունավոր և թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր, որոնց արժեքը գերազանցում է 1.0 /մեկ/ մլն. դրամը:

13. Տրանսպորտային միջոցների դուրսգրումը իրականացվում է անկախ գնահատողի եզրակացության հիման վրա: Հանձնաժողովը՝

1) տրանսպորտային միջոցների խոտանման վերաբերյալ ստացված նյութերը նախապես քննարկում է, տեղում ուսումնասիրում դրանց փաստացի տեխնիկական վիճակը և

կազմում զննման ակտ, որում տալիս է եզրակացություն վերականգնման կամ դուրս գրման նպատակահարմարության մասին,
2) տրանսպորտային միջոցների խոտանման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի և կատարված ռաումնասիրության արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և ներկայացնում է համայնքի ղեկավարի որոշման նախագիծ,
3) Համայնքի ղեկավարի որոշման հետ միասին կազմակերպությանն են վերադարձվում տրանսպորտային միջոցների խոտանման ակտերը, բացառությամբ ընդհանրացված ակտերի և զննման ակտի:

14. Կազմակերպությունները՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա, տրանսպորտային միջոցները հանում են շահագործումից և ՀՀ ճանապարհային ոստիկանության հաշվառումից, որից հետո միայն իրականացնում դրանց դուրսգրումը, պիտանի մասերի, հանգույցների, ագրեգատների մուտքագրումը և այլն:
15. Մինչև լուծարման կամ դուրսգրման ակտի հաստատումը, իսկ տրանսպորտային միջոցների դեպքում նաև տրանսպորտային միջոցի հաշվառումից հանելու մասին ՀՀ ճանապարհային ոստիկանության տեղեկանքի տրամադրումը, դուրս գրվող լրիվ մաշված գույքի քանդում և ապատեղակայում չի թույլատրվում:
16. Քանդված և ապատեղակայված լրիվ մաշված գույքի այն հանգույցները, նյութերը, դետալները և առանձին մասերը, որոնք պիտանի են հետագա օգտագործման համար, գնահատվում և մուտքագրվում են այն հաշիվներին, որոնցում հաշվառվում են համանման նյութական արժեքները, իսկ ոչ պիտանի դետալները և նյութերը հաշվառվում են որպես ջարդոն:
17. Հիմնարկի, կազմակերպությանն ամրակցված լուծարված կամ դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի վերաբերյալ, որոնք պիտանի են հետագա օգտագործման համար, կազմվում է եզրակացություն և ուղարկվում է Նոր Հաճընի համայքապետարան, որը կազմակերպում է համապատասխան գույքի, նրա առանձին հանգույցների, նյութերի դետալների և մասերի աճուրդ և ստացված միջոցները ուղղվում է համայնքի բյուջե:
18. Կազմակերպության սեփականություն հանդիսացող գույքի լուծարումից կամ դուրսգրումից ստացված 1.0/մեկ/մլն դրամից ավելի արժեք ունեցող առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի վերաբերյալ, որոնք պիտանի են հետագա օգտագործման համար, կազմվում է եզրակացություն և ուղարկվում է Նոր Հաճընի համայնքապետարան, որտեղ կազմակերպվում է համապատասխան գույքի, նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի աճուրդ և ստացված միջոցներն ուղղվում է կազմակերպությանը: Կազմակերպության սեփականություն հանդիսացող գույքի լուծարումից կամ դուրսգրումից ստացված միջոցները տնօրինվում են կազմակերպության կողմից:
19. Նախկինում առևանգված և դեռևս չհայտնաբերված հիմնական միջոցների դուրսգրման ժամանակ, որի վերաբերյալ կա հարուցված քրեական գործ, լրացուցիչ պահանջվում է քրեական գործը կարճելու վերաբերյալ համապատասխան որոշում:

20. Լուծարված կամ դուրս գրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի ոչնչացումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Համայնքի ավագանին լրիվ մաշված գույքի առանձին տեսակների համար կարող է սահմանել լրիվ մաշված գույքի դուրսգրման այլ կարգ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկություններն ու հիմնավորումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 67-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի 07-025-0564-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող դաշտամիջյան ճանապարհն անվանակոչել թվային կարգով՝ 23-րդ փողոց:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի 07-025-0513-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող դաշտամիջյան ճանապարհն անվանակոչել թվային կարգով՝ 24-րդ փողոց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 66-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 28- ի << 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարվող Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկը հաստատելու մասին>> N 38-Ա որոշման թիվ հավելվածում կատարել փոփոխություն համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվանից :

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված

Նոր Հաճըն համայնքի ավագանու

2025 թվականի մարտի 28-ի N 38- Ա որոշման

Փոփոխված

Նոր Հաճըն համայնքի ավագանու

2025 թվականի հունիսի 27-ի N 66 Ա որոշմամբ

ՑԱՆԿ

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակերեսը (հա)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	կադաստրային արժեքը	մեկնարկային գինը	ծանոթություն
1	Նոր Հաճըն համայնք	0.00925	07-006-0011-0086	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	632240	640000	
2	Նոր Հաճըն համայնք	0,00318	07-006-0011-0087	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	217360	220000	
3	Նոր Հաճըն համայնքի գյուղ Արգել	0.00605	07-014-0053-0093	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	114270	600000	
4	Նոր Հաճըն համայնքի գյուղ Արգել	0.13023	07-014-0029-0003	արդյունաբերության	արդյունաբերական օբյեկտների	2459660	3907000	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 65-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 28- ի << 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարվող Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկը հաստատելու մասին>> N 10-Ա որոշման թիվ հավելվածում կատարել փոփոխություն համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվանից :

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված

Նոր Հաճըն համայնքի ավագանու

2025 թվականի փետրվարի 28-ի N 10-Ա որոշման

Փոփոխված

Նոր Հաճըն համայնքի ավագանու

2025 թվականի հունիսի 27-ի N 65-Ա որոշմամբ

ՑԱՆԿ

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	Հողամասի մակերեսը (հա)	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	կադաստրային արժեքը	մեկնարկային գինը	ծանոթություն
1	Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոց թիվ 138/19	0.24	07-048-0054-0263	բնակավայրերի	Խառը կառուցապատման	10660800	14400000	
2	Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոց թիվ 138/18	0.1818	07-048-0054-0170	բնակավայրերի	Խառը կառուցապատման	8075560	14544000	
3	Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Գեղի, Ֆ. Երևանայնփողոց թիվ 138/17	0.1149	07-048-0054-0187	բնակավայրերի	Խառը կառուցապատման	5104000	9192000	
4	Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Գեղի, Ֆ. Երևանայն փողոց թիվ 138/16	0.12	07-048-0054-0188	բնակավայրերի	Խառը կառուցապատման	5330400	9600000	
5	Նոր Հաճըն համայնքի գյուղ Քարաշամբ, 9-րդ փողոց թիվ 21/1	0.09917	07-066-0011-0004	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1862120	1983400	
6	Նոր Հաճըն համայնքի գյուղ Քանաքեռավան	0.5	07-064-0244-0058	գյուղատնտեսական	վարելահող	182500	3000000	
7	Նոր Հաճըն համայնքի գյուղ Թեղենիք	1.38734	07-032-0105-0009	գյուղատնտեսական	վարելահող	513320	800000	
8	Նոր Հաճըն համայնքի գյուղ Թեղենիք	0.238	07-032-0116-0015	գյուղատնտեսական	վարելահող	88060	300000	
9	Նոր Հաճըն համայնքի գյուղ Թեղենիք	0.126	07-032-0116-0006	գյուղատնտեսական	վարելահող	200970	500000	
10	Նոր Հաճըն համայնքի գյուղ Թեղենիք	0.17639	07-032-0125-0006	գյուղատնտեսական	վարելահող	97900	300000	
11	Նոր Հաճըն համայնքի գյուղ Քարաշամբ	0.12553	07-066-0201-0012	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2357100	3138300	
12	Նոր Հաճըն համայնքի գյուղ Մրգաշեն	0.10578	07-046-0035-0048	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3054400	4231200	
13	Նոր Հաճըն համայնքի գյուղ Մրգաշեն	0.09928	07-046-0035-0047	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2866710	3971200	
14	Նոր Հաճըն համայնքի գյուղ Մրգաշեն	0.19468	07-046-0035-0046	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	5621390	7787200	
15	Նոր Հաճըն համայնք	0.10518	07-006-0011-0084	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	7189100	10518000	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 64_Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով, քննարկելով համայնքի ղեկավարի ներկայացրած համայնքի հողային հաշվեշիռը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Նոր Հաճըն համայնքի հողային հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2025 թվականի N 63-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27- Ի ԹԻՎ 7- ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 27-ի թիվ 7 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

2.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 28-ի N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

3.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 28-ի N 38-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի Մարզի Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղում թվային կարգով փողոցներ անվանակոչելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքապետարանի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման կարգը հաստատելու մասին

6.Նոր Հաճըն համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրելու մասին

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕՋՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**